ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

21 դեկտեմբերի 2023 թվական թիվ 220-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԻՆ ԵՎ ՄԱՐԶԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 26-ի թիվ 61-Ն որոշման հավելվածի 17-րդ կետի դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ազատան, Արևիկ, Հացիկ բնակավայրերի վարչական ղեկավարների, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Ախուրյանի համալիր մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի գրությունները և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրյան բնակավայրի բնակիչ Մանվել Էդգարի Խաչատրյանի ներկայացրած հավաստագիրը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի 2023 թվականի բյուջեի 10 բաժնի 07 խմբի 01 դասի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) ծրագրի 4727 «Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից» հոդվածով հատկացված գումարներից դրամական աջակցություն տրամադրել՝

1) 2023 թվականի դեկտեմբերի 1-ին և 2-ին Հայաստանի Հանրապետության Արտաշատ քաղաքում կայացած ազատ ոճի ըմբշամարտի մեծահասակների Հայաստանի Հանրապետության առաջնությունում՝

ա. 57 կգ քաշային կարգում 1-ին տեղը զբաղեցրած Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատան բնակավայրի բնակիչ Մանվել Արծվիկի Խնձրցյանին՝ 200000 (երկու հարյուր հազար) դրամ, մարզիչ Կարապետ Վաչագանի Ենգոյանին՝ 100000 (մեկ հարյուր հազար) դրամ,

բ. 125 կգ քաշային կարգում 2-րդ տեղը զբաղեցրած Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատան բնակավայրի բնակիչ Հենրիկ Լյովայի Հայկյանին՝ 150000 (մեկ հարյուր հիսուն հազար) դրամ, մարզիչ Արտուշ Ռուբիկի Իկիլիկյանին՝ 75000 (յոթանասունհինգ հազար) դրամ,

գ. 97 կգ քաշային կարգում 2-րդ տեղը զբաղեցրած Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատան բնակավայրի բնակիչ Արման Էդիկի Մահտեսյանին՝

150000 (մեկ հարյուր հիսուն հազար) դրամ, մարզիչ Ավետիք Գառնիկի Անտոնյանին՝ 75000 (յոթանասունհինգ հազար) դրամ,

դ. 86 կգ քաշային կարգում 3-րդ տեղը զբաղեցրած Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատան բնակավայրի բնակիչ Մուշեղ Միշայի Մկրտչյանին՝ 80000 (ութսուն հազար) դրամ, մարզիչ Մխիթար Կարապետի Հունոյանին՝ 40000 (քառասուն հազար) դրամ:

ե. 57 կգ քաշային կարգում 3-րդ տեղը զբաղեցրած Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հացիկ բնակավայրի բնակիչ Միհրան Միրզայի Սլոյանին՝ 80000 (ութսուն հազար) դրամ, մարզիչ Միեր Հարությունի Զաքարյանին՝ 40000 (քառասուն հազար) դրամ:

2) 2023 թվականի դեկտեմբերի 3-ից 5-ը Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքում կայացած հունահռոմեական ոճի ըմբշամարտի մեծահասակների Հայաստանի Հանրապետության առաջնությունում՝

ա. 55 կգ քաշային կարգում 1-ին տեղը զբաղեցրած Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրյան բնակավայրի բնակիչ Մանվել Էդգարի Խաչատրյանին՝ 200000 (երկու հարյուր հազար) դրամ, մարզիչ, նույն բնակավայրի բնակիչ Էդգար Մանվելի Խաչատրյանին՝ 100000 (մեկ հարյուր հազար) դրամ,

բ. 97 կգ քաշային կարգում 2-րդ տեղը զբաղեցրած Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Ախուրյանի համալիր մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության սան Արշակ Լևոնի Գեղամյանին՝ 150000 (մեկ հարյուր հիսուն հազար) դրամ, մարզիչ Արման Գեղամի Գեղամյանին՝ 75000 (յոթանասունհինգ հազար) դրամ:

3) 2023 թվականի դեկտեմբերի 09-ից 10-ը Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքում կայացած ձյուդոյի մեծահասակների Հայաստանի Հանրապետության առաջնությունում 81 կգ քաշային կարգում 3-րդ տեղը զբաղեցրած Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Արևիկ բնակավայրի բնակիչ Լևոն Կարենի Վանոյանին՝ 80000 (ութսուն հազար) դրամ:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -23 Դեմ - 0 Ձեռնպահ – 0

Ֆ. ԱՆՏՈՆՅԱՆ
Ա. ԱՅՎԱԶՅԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Մ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Վ. ԱՐՇԱԿՅԱՆ
Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Ա. ԴՐՄԵՅԱՆ
Ա. ՄՔՈՅԱՆ
Ա. ԻԳԻԹՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ա. ՉԱԼՈՅԱՆ
Ս. ՍԻՄՈՆՅԱՆ

Մ. ՄԱԹՈՍՅԱՆ
Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
Գ. ՄԿՐՏՉՅԱՆ
Մ. ՄՆԱՑՅԱՆ
Ն. ՄՈՒՇԵՂՅԱՆ
Կ. ՆԵՐՍԻՍՅԱՆ
Թ. ՍՈՒՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

21 դեկտեմբերի 2023 թվականի
գյուղ Ախուրյան